

Հագորամբղ հաճախատա Չար-
դեպին վե ձուսմա իրրեսի կիւն-
լիքի բապ օրուսուր 1.րշ.
Սեփեկի պոսրա իջին բեշին 60
Այրք այլերք 35
Լեփեկի բեշին բաշրա իջին 85
Այրք այլերք 45
Բոսրա իւճրեքի պիգե այիտ տիր.
90 դրուշուգ բոսրա բուշու 80
դրուշա գապուլ օրուսուր.
15 կիւնիւք ցիւսիսե 60 քր. տըր.

ՄԷՃՄՈՒՄԷ

ԱԻՊԱՐ

50 րարս

50 րարս

جموعه اخبار

ك.اوغل قديم جادهسى نوسرو 75

DIRECTION

DU JOURNAL

MEDJMOUA-I-AHIBAR

Grand'Rue de Pera 65

Հագեթանա միւթէալիգ խոսուսաթ իւրն ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՕՂԱՅԵԱՆԱ միւրաձաաթ օրուսուր — Իտարէխանէ՛ Պէյօղլունտա ձաաուէի քէպիրուէ Ն. 65

ԱՍԻԹԱՆԷ 2 ԾԳՈՍՏՈՍ

ԹՕԳՍ

Ահաւասիկ երկուք ու կէս տարիէ
ի վեր է դրեթէ, որ Եւդոկիացուց
երախաագէտ, ու իրենց սիրելի Հո-
վոին հաւատարիմ սրտերը՝ թախ-
ծութեամբ բաժնուած իրենց բա-
րեջան Առաջնորդէն՝ կը սպասէինք
անձկանօք թէ հ'ըր արդեօք վերըս-
տին պիտի հնչէ մեր ականջաց մեր
ամենասիրելի Հօր, եռանդուն խնա-
մարարն ուրախալի դարձին քաղցր
ձայնը։ Եւ երբ լսեցինք մօտերս նո-
րա Պոսէն մեկնիւնք և հրճուելի դարձն
առ մեզ, անպատու՜ եղաւ ինդու-
թիւնիս։ Բարախեղ սկսաւ որտերնիս
երբ լսեցինք որ Սամսոնէն ալ մեկ-
նած կ'օխած է այլեւս իւր վիճակին
հոլը ու կը յառաջանայ շարունակ
դէպ առ մեզ։

Յուլիս 24ն է եղեր սոյն երջանիկ
ու միւթարիչ օրը, այն բարեբաստիկ
օրը։ Օր մ'արդարեւ՝ որ մեզ ամենուս
մոռցընել տուաւ գործն ու զբաղ-
մունքը, օր մը որ ոչինչ համարել
տուաւ վաճառականին իր սոյն օր-
ուան լազանդակ շահը, արհեստաւո-
րին ամբողջ երթեւեկողները, գոր-
ծաւորին իր օրականը, դպրոցական-
ներու իրենց ուսմունքը։ Առաւօտուն
կանուխ ամենուս երեսը եռանդեան
ու ցնծութեան նորանոր նշաններ կը
կարդացուէր, ամէնը մէկ մէկու կը
հաղորդէին խնդում մը ու զուար-
թութիւն մը, մէկգլմէկ կը հարցնէին
գիմաւորեւ երթալու ժամն ու ժա-
մանակը։ Վերջապէս կարծես թէ ա-
րեւն ու օդն ալ միասին խնդակից
կ'ըլլային մեր ամենուս ցնծութեանը։
Այո՛, սոյն յուլիս 24ին երեքշաբթի
օրն եղաւ Եւդոկիոյ անխոնջ Հովուին
իր սիրելի հօտին հասնելուն ամե-
նաբերանալ օրը, երկուք ու կէս
տարի առաջ զգացած տրտմալի բա-
ժանման ցաւին փոխարէն, հաւատա-
ցելոյ սրտին մէջ բերկրութիւն ու
զուարթութիւն փոխանակելու մէկ
հատիկ օրը։ Ուստի և կէս օրուրնէ
վերջ համայն ազգայինք հանդերձ ի-
րենց մեծամեծներովը, առաջնորդու-
թեամբ Գերլ. Ներսէս Ծ. Վ. Տաղ-
տաղանեանի՝ որոյ ընկերացած էին
Գերլ. Պետրոս Ծ. Վ. Այճեան, Գեր-
մովսէսի Վ. Գալպէտեան, Վեր. Յիսուս-
եան Փոխան-Միծաւորը, ընկերակ-
ցութեամբ մեծաշուք մուսվին թ'ըն-
կըրեան Յակոբ Էֆի, կառօք և հե-
ծելովք, Տէրութեան ոստիկանաց
բազմութեամբը՝ ընդ Առաջնորդու-

թեամբ իրենց հարեւրապետին, դի-
մեցինք դէպ ի խաղովայն ընդար-
ձակ դաշտը՝ երկու ժամ գրեթէ հե-
ռաւորութեամբ քաղքէս։ Եւ իրիս
գետին դաւարագեղ ու զուարճալի
ափանց վրայ, շրջնկացող ու զեփեւ-
ռանման փչող վարսաւոր ծառերու
հովանաւորութեան տակ նստանք
զուարթութեամբ, սպասելով անհամ-
բերութեամբ հեռուէն կառքերու
մէկ նշույլ մը կամ երեւման մը։

Երեկոյեան ժամը 7ին ատենները էր
որ նշմարեց ինք յանկարծ կառքերու
խումբ մը, ա'լ անկարելի էր այնու-
հետեւ բռնել երիտասարդաց աշ-
խոյժը, ձիաւորաց անոանձ ընթաց-
քը։ ամենը անհամբեր կը դիմեն
իրենց ամենախնամ ու գորովագութ
Հօր ընդ առաջ։ Կը համբուրեն սուրբ
Այլ որդիական սիրով, կ'առնեն հայ-
րալիք առատ օրհնութիւնները ու
կ'եղան ձիերուն վրայ։ Իրենց սիրա-
սուն Հովուին բարեխնամ Հօր ալ ու
ձախ դին շարուելով կ'ընթանան դէպ
ի իրենց ակումբը։

Երբ բոլոր բազմութիւնը տեսաւ
կառքին մէջ իրենց գորովագութ Հօր
հայրական ճակատը, ձիւնանման ալե-
ւոր մօրուքը, առոյգ դէմքը՝ վերցու-
ցին ծափահարութեանց և կեցցէներու
աղաղակ մը, բարձրացուցին բերկրա-
լից սրտերու յայտարարիչ հաւաստի
նշաններ, երախտագէտ սրտերու
խանդաղակութ խօսքեր։ Չհանդուր-
ժեց այլեւս գորովալիք Հայրն ալ
յապաղիլ կառքին մէջ ու իր որդի-
քը անհամբերութեան մէջ թողուլ-
իշաւ անմիջապէս կառքէն, թէեւ
հոգնած, այլ կուտար սիրով իր սի-
րալիք ողջայններն ու երկնապարգեւ
օրհնութիւնները իր հաւատարիմ հօ-
տին առատապէս։ Նստելով անդ իր
ոչխարաց գլուխը և սակաւիկ շունչ
առնելով ծառերուն ներքեւ, ելանք
վերստին կառօք և հեծելովք, կա-
ռավարութեան ոստիկաններու բազ-
մութիւնը առջեւէն, ձիաւորները
յայտելոյ յայնկոյս իրենց Արքեպիս-
կոպոս Հօր, և կառքերով դիմաւո-
րողները ետեւէն, ու այսպէս արագ
արագ մտանք ի քաղաք։ Եւ երբ հա-
սանք Եպիսկոպոսարանի փողոցը՝ ըզ-
գեցուցին Հօտապետին Հայրապե-
տական սլերձ զգեստը, Արքեպիսկո-
պոսական զաւազանը ի ձեռին, Ս.
Խաչն ի յաջն օրհնելով ալ և ահեակ
կ'ընթանար առ Ս. Եկեղեցին։ Գե-
պիւք եւս իրենց կանոնաւոր ընթաց-
քովը կը հնչէցնէին անուշ երգեր.
Իսկ կըրտական դասը՝ որ կը հետե-
ւէր դպրաց, մեծ շքեղութիւն մը
կ'ընծայէր հանդէսին։

Յեկեղեցւոյ Արհիպպատի Գերա-
պայծառը այցելութիւն մ'ընելէն
վերջ, գեղեցիկ, կարճ ու պերճ ա-
տենաբանութիւն մը ընելով, ծանոյց
միանգամայն ու հրատարակեց ժողո-
վրդեան Օգոստովառ Հպատակասէր
Կայսեր վեհ ողջունները, աւետեց
Նորին հովանաւորութեան ներքեւ
խաղաղաւէտ ըլլալին, յորդորելով
խորին և ամենահաւատարիմ հպա-
տակութիւն ցուցընել առ այսպիսի
անդուգական Ինքնակա մեր։ Հաղոր-
դեց նմանապէս Սրբազան Բահանա-
յապետին Լեւոնի ժԳ.ի հայրախնամ
առատ ու սուրբ օրհնութիւնները։
Նայնպէս Գերեթի. Կաթողիկոսին Հայ-
րապետական օրհնութիւնը։ Վերջա-
պէս աւարտեց իր խօսքը տալով հրա-
պարակաւ Հայրապետական սուրբ ու
երկնածիր օրհնութիւնները, մաղթե-
լով ի վերուստ ամենայն յաջողու-
թիւն ու բարիք, խաղաղութիւն ու
խէր։

Յետոյ ելլալով Առաջնորդարան,
տուաւ հիւրասէր ընդունելութիւն մը
մեծամեծաց, յորում պահու ամենէն
առաջ աղբու կերպով խօսեցաւ Նո-
րին Սրբութեան փոխանորդը Գերլ.
Ծ. Վ. Տաղտաղանեան, թուելով մի
առ մի իւրեանց քրտնալն և ան-
քուն Հովուին մեծ ու անզուգական
բարիքներն զորս բրած էր Սերաստիոյ
Եւդոկիոյ աթոռն բարձրանալէն զկը-
նի։ Որով իրր երկրորդ Յետու Յովսե-
դեկեայ մեծ քահանայ՝ լու գիտցաւ
անշքացեալ տաճարին և ազգին փառ-
քը վերանորոգել՝ հաստատելով
երկսեւ վարժարաններ ի բարեք
դաստիարակութիւն ազգային ման-
կանց։ Ասկէց վերջ ի դիմաց համօ-
րէն Հայ-Կաթողիկէ ժողովրդեան
որդիական խորին հնազանդութեան
ցոյց մ'ընծայելով մաղթեց ի Տեառ-
նէ ամենայն յաջողութիւն և բարիք
վասն երկարութեան կենաց և եր-
ջանկութեան Արհի. Առաջնորդին իւր-
եանց՝ որ նոր կեցցէներով ու ծա-
փահարութեամբ ընդունուեցաւ ժո-
ղովրդեան կողմանէ։

Յետոյ դպրոցի տղաք տաճկերէն,
հայերէն, գաղղիերէն ճառեր և ու-
ղերճներ կարդացին։ Այսպէս նաեւ
Անարատեղութեան Գերց սաները եր-
գերով ու խօսակցութիւններով յայտ-
նեցին իրենց իղձերը։ Ասոնցմէ վերջ
խօսեցաւ վերստին Արհիպպատի Գե-
րապայծառ Տէրը ցուցընելով, թէ
հասարակութեան մը յառաջադիմու-
թեան ամենահարկաւոր միջոցն է
գաղղացոյ յառաջադիմութիւնն և ա-
նոնց յարատեւ ջանքն ու փոյթը։
Օրն տարածամեալ ըլլալով, ջըը-

ուեցաւ ժողովուրդը դոհ և ուրախ
սրտով իրենց տունները։

Հոս գրութեանս վերջ մը տալէն
առաջ պէտք չէ մոռնալ Վսեմ. քա-
ղաքապետիս անաչառ և արդարա-
կորով Պէքիր բաշայի առ մեզ յըցու-
ցած սէրն՝ որ ի ցոյց իւր բնածին
քաղաքագէտ մարդասիրութեան, պա-
տիւն բրաւ մեզ, խաւրելով ընդ ա-
ռաջ մեր Արժանապատիւ Հովուին
իր սեփական կառքը, և իր կողմանէ
ալ փոխանորդաբար առաքելով ընդ
առաջ մեծաշուք մուսվինը Յակոբ
Էֆ. Թընկըրեանը։

Այս ամենը, ... Խմբագրապետ,
պարտք անձին համարեցայ ծանու-
ցանել Ձեզ, որպէս զի հաճիք Ձեր
ազգօգուտ թերթին մէկ էջին մէջ
հրատարակել Եւդոկիացուց նախկին
եռանդեան ու իրենց Արհի. Վիճա-
կաւորին ունեցած խորին յարգանաց
և սիրոյ համբաւը։ ԹՈՂԱՅԵԱՆ ՄԸ
Թօգատ, 25 յուլիս 1900

ՌԻՍՈՒՄԱՐԱՆ

Ս. ԳԻՐԻՊՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ

Ուսումնարանը պիտի վերաբացուի ա-
ռաջիկայ Սեպտեմբեր ամսոյն 1ին, Ուրբաթ
օրը։ Դասախօսութիւնները պիտի սկսին
Սեպտեմբեր 4ին, երկուշաբթի։

Ընդունելութեան պայմաններուն տե-
ղեկանալ փափագող պատուական աղգա-
սինք կրնան երեքշաբթի եւ Ուրբաթ օրե-
րը, մինչեւ կէս օր, դիմել Ուսումնարանը,
Եէշիլ փողոց, թիւ 1, Բերա։

Բերա, 24 Յուլիս 1900

Տեղեկութիւն

ԽԱՐԻՃԻՅԷ

ԳՐԱԼ ՈՒՄՊԵՐԹՕՆԸՆ ՃԷՆԱԶԷ ԱԼԱՅԸ

Գրալ Ումպերթօնը նաշընը համը օ-
ւան թրէն՝ չըզան բէնչէնպիս սապանը
սաաթ ալաֆ. 6 պչ.տա Բօմա ըսթափո-
նընա վասըլ օլմուշ տուր Վազօնար հէր
սիեահա պիւրիւնմիւշ տուր Թապուլթ՝ մա-
տուռա թէպտիլ իտիլմիշ օլան պիւր վա-
կօն-սալօնա զօնմուշ օլուպ, տիւզ տ'Աօսթ
իլէ զօնթ տը Թուրէն՝ Մօնցատան Բօմաեա
զատար րէֆազաթ իթմիւշէր տիւր Աեան վէ
Մէպուսան ընիպէրի վէ տուա իթմէքտէ
օլան պիւր Գարուչին րահպի տէ պիւրիք-
տէ պուլունմուշլար տըր իմանէտանը դրա-
լի բրէնսէրի, էճնէպի մուրախխալարը,
վիւքէլա, սերալը զրալի պիւրիւք մէմուր-
լարը, աեան վէ մէպուսան մէմիւրէրի ա-
զալարը, սիւֆէրա, դօնսօլուար, օրտու մշ-
պուլարը, միւլքիէ մէմուրլարը, էեալաթ
մէպուլարը, բաթիթաթ վէ սաիւր չէհիւր-
լէրին պէլէթիէ միւտիւրլէրի վէ սաիւրէ՝ օլ
էսնաթ ըսթափօնտա հաղըր օլուպ, սաաթ
7տէ, 8 նէֆէր սիւարի զապիթլէրի, թա-
պուլու, ըսթափօնտա խասթէթէն հաղըր

